

## ԳԱՆՑԻԱ ԿԱՄ ԿՐԵՑԷ ԿՂՋԻՆ

**Կրետէ կղզին որ միջին գարէն՝ի վեր**  
**դանտիոյ անուամբ ճանչցուած է յԱ-**  
**րևմուայց, յունական արշիպեղագո-**  
**սին ամենէն մեծ, ընդարձակ և գեղե-**  
**ցիկ կղզին է, արեելեան Միջերկրակա-**  
**նին Սիկիլիան: Քերդողական զրոյց մը**  
**կը վկայէ իւր արդաւանդութեանը զար**  
**մանալի համբաւոյն զոր կը վայլէր հին**  
**ժամանակները. կ'ըսեն թէ հոն իրեք**  
**անգամ արօրեալ դաշտի մը մէջ Դե-**  
**մետք աստուածուհին ծնաւ զՊլուտոս**  
**հարուսութեան աստուածը: Այս կը դ-**  
**րոյց մեծութիւնը, ծովափանցը և հո-**  
**վիտներուն բերոց զանազանութիւնը,**  
**բարձրաբերձ անտառները որ սկզբան**  
**կը ծածկէին իր լեռներուն կողերը որ**  
**այսօրուան օրս լերկ են, ընդարձակ և**  
**ապահով նաւահանգիստները քիչ տ-**  
**տենէն հրապուրեցին զշելիքնս որսկան**  
**բազմաթիւ գաղթականներ թափել**  
**կրետէի ափսւնքը ու աքայեցի և դոր-**  
**ցի քաղաքներ կանգնել իդայի և Սպի-**  
**տուկ լերանց (յն. լէզգա-Օրի) հովիտ-**  
**ներուն մէջ: Այս գաղթականները դեռ**  
**չեկած ու չբազմացած՝ կրետէ կ'երեայ**  
**մեզի իր Մինովս օրէնսդրին ինքնիշ-**  
**խան վարչութեանը տակ, չորս կողմի**  
**եզերը լուացող ծովերուն տէր: Մի-**  
**նովս ջնջեց կվեան ծովէն աւազակները,**  
**տիրեց կիւկապայց և տուաւ բոլոր կրե-**  
**տէի օրինաց մատեան մը, զոր կ'ըսեն**  
**թէ ժամանակաւ առաջնորդ ունեցած**  
**ըլլայ իրեն լիկուրգոս: իդոմնէս իրեն**  
**թագաւորներէն մէկն է որ Տրովագայի**  
**պատերազմին գնաց. մեր թուականէն**  
**առաջ ը զարուն մէջ վերցուեցաւ թա-**  
**գաւորութիւնը. այլ և այլ հասարակա-**  
**պետութեց իրարու հետ ունեցած ան-**  
**հաշտ ոխութիւնքը և կոխները նոր օ-**  
**րէնսդրութիւն մը խնդրելու ստիպեցին**  
**զիրենք, զոր և տուաւ Ոնոմակրիտէս ա-**  
**թենացի բանաստեղծը և դիւթը: կրե-**  
**տէ ամենսին Յունաստանի զործոց մէջ**  
**խառնուած չէ. զուր տեղ թախանձե-**

ցին զիրենք Ելլագայի բնակիչքը որ  
 մարական պատերազմին մասնակից ըլ-  
 լան և օգնեն հայրենեաց՝ ընդդէմ բո-  
 վանդակ Ասիոյ սպառնալից բանակնե-  
 րուն: Դորացի կրթութեամբ և ընտա-  
 նի պատերազմներով զինաշարժու-  
 թեան վարժած՝ Քրիստոսէ առաջ իդա-  
 րուն վերջերը սկսան վարձքով օտար-  
 ներու համար պատերազմիլ. անուանի  
 իրեկ աղեղնաւորք և թեթևընթաց հե-  
 տևակ զօրական՝ կը տեսնակը որ ա-  
 մէն տեղ ուրիշի շահուն համար կրե-  
 տացիք ձեռնամուխ կ'ըլլան ժամանա-  
 կին որ և է կոխներուն, որ և է զինուո-  
 րական արշաւանաց մէջ, և միշտ պատ-  
 րաստ աւելի ստակ տուողին իրենք զի-  
 րենք ծախելու:

Սակայն կապագովվկացւոց ու կիլի-  
 կեցւոց պէս խարդախ և նենգաժոտ՝ ուր-  
 տերդմնուիլ իրենց համար բան մը չէր-  
 գիտենք որ Յոյները միշտներողամիտ ե-  
 ղած են ճարտար խարէութեան և ստա-  
 խօսութեան, ինչպէս օրինակի համար  
 Պալլաս խմսսութեան դիցուհին որ  
 Ոդիսականին մէջ ուրախակից կ'ըլ-  
 լայ Ոդիսեայ իրեն ստելու հանճարոյն  
 վրայ. սակայն նոյն խսկ Յոյները կը խոս-  
 տովանէին որ կրետացիք չափ չեն պա-  
 հեր, անանկ որ կրետացի հոմանիշ ե-  
 ղաւ ստախօս բառին, և ռամկական  
 առած մը կ'ըսէր որ պէտք էր կրետա-  
 նալ կրետացւոց մը հետ, այսինքն խա-  
 բերային հետ խարէութեամբ երթալ:  
 Ծանօթ է նաև Եպիմենիդէս կրետացիք  
 քերթողին տուած վկայութիւնը իրեն  
 հայրենակցաց վրայ, զոր և կը յիշէ Պօ-  
 դոս Առաքեալ առ Տիտոս թղթին մէջ.  
 « Ասաց ոմն ՚ի նոցանէ՝ իւրեանց խսկ  
 մարդարէ. կրետացիք հանապազա-  
 տուտք, չարաճճիք, դատարկապորտք:  
 Եւ ստոյդ է վկայութիւնս այս »: իրենց  
 բարի համբաւը բանի տեղ չդնող և  
 անձնական պատիւնին դիւրագնի ծա-  
 խող մարդիկը հարկաւ արծաթասէր  
 ալ պիտի ըլլային, և կրետացւոց ա-  
 նունն հաւասարապէս ելած էր իրեկ  
 ագահ և իրեկ նենգաւոր:

Հռովմէսական իշխանութեան օրէ օր

մեծնող ստուերը տարածուելով Արևելից վրայ, վերջապէս բանակ մ'ելաւ կրետէ, և ուժգին գիմանկալութենէ մը ետքը զիսաւոր քաղաքները հետզիետէ անձնատուր եղան կամ առնուեցան յարձակմամբ. և Քրիստոսէ 66 տարի առաջ Մետելլոս մը բոլորովին ընկնելով զկղղին ստացաւ կրետացի (Crete-isus) կոչումը: Հին ազգաց մէջ թերես կրետէի նման երկիր մը եղած չէ որուն օգտակար ըլլայ օտար ազգի մը լուծը. այն ատեն հուսկ ուրեմն երկայն դարերէ 'ի վեր բորբոքած ներքին պատերազմները մարեցան, և սրտերու մէջ բունեալ արիւնահեղ ատելութիւնները կամաց կամաց մոռցուեցան. հոռվմէական խաղաղութեան տակ, ինչպէս կ'ըսէ Պլինիոս, կրետէ այնպիսի հարստութեան և երջանկութեան աստիճան մ'ելաւ որ ինչուան ան ատեն չէր ճանչցած: Իր ծովային գիրքովը երկայն ժամանակ պահուեցաւ բարբարոսաց ասպատակութիւններէն որ ոտնակոխ կ'ընէին զցամաք երկիրը, և մեր թուականին Ե և Զ դարերուն մէջ արևելեան կայսրութեան ամենէն աւելի մարդաշատ և բարդաւաճ նահանդներէն մէկն էր: Բայց երբ ի դարուն Արաբացիք ծովապետեցին, ինքն ալ սկսաւ տագնապիլ. շատ անգամ արշաւելէ ետքը՝ Հագարացիք 825ին բոլորովին տէր եղան կղզոյն: Գանտիա քաղաքին սկիզբը և անուանակոչութիւնն այն խրամէն եղաւ (արաբերէն խանտագ) զոր Արաբացիք իրենց տռաջն ցցապատնէշ բանակին չորս կողմը փորեցին, ուր և ամրացան կղզին ելլենէն ետքը, կնոսոսի աւերակներէն ոչ շատ հեռու: Նիկեփոր Փոկաս 964ին դարձեալ Բիւզանդիոնի կայսրութեան դարձուց կրետէն ինչուան չորրորդ խաչակրաց ժամանակը: Եւրոպացւոց կոստանդնուպօլիսն առնելէն վերջը, այս կղզիս վենետիկոյ ամենէն աւելի մեծ կալուածն եղաւ Միջերկրականին մէջ. Հասարակապետութիւնը յետ քաջութեամբ պաշտպանելու իր տիրապետած երկիրը կրետացւոց ապստամբու-

թեանցը դէմ' որոնց ձեռքի տակէն գըրգիո և օգնութիւն կը մատուցանէր նախանձորդ գենուան, շարունակեց իր իշխանութիւնը մինչև մէջ դարուն մէջերը, երբ որ Տաճկաց սուլդանները աչք տնկելով իր օգտակար դրիցը, գեղեցիկ նաւահանգիստներուն և բարեբեր երկրին, սկսան ձեռք ձգելու ջանալ: Պատերազմը բացուեցաւ 1645ին. յետ փոփոխակի յաղթութեց և պարտութեանց, յետ քանամեայ և աւելի պաշարման որ 25 միլիոն տուգադի նըստաւ ծերակուտին, և յորում փայլեցին Մորոզինիի յամառ պնդասրտութիւնը, Լաֆէյեատի ու իր զինուորակից Գաղղիացիներուն զիւցազնական քաջութիւնը, գանտիա անձնատուր եղաւ 1669ի սեպտեմբերի 6ին. ան ատենէն 'ի վեր կրետէն Տաճկաց ձեռքը մնաց: Առանց խօսքերնիս շատ երկնցնելու 1824ին հելլենական անկախութեան պատերազմին վրայ, աս միայն ըսենք որ նոյն տարւոյն յովիս ամսոյն կրետացիք ապստամբութեան շարժմունքը մը ցուցընելով՝ պատճառ եղան որ մայր եկեղեցին թալլուի և սրբավայրին մէջ սպաննուին 75 հոգի, որոնց մէջն էր նաև գերասիմոս արքեպիսկոպոսը և հինգ ուրիշ եպիսկոպոսներ: 1824ին բարձրագոյն գուուը Մէհէմմէտ Ալիին թողուց կղզին որ կը կարծէր թէ իրեն եւրոպա անցնելու կամուրջ կ'ըլլայ. բայց հազիւ թէ բաւեցին երկու նաւատարումիզ զերետէ նուաճելու, որոնցմէ մէկն էր Հասան բաշային հրամատարութեանը տակ 5000 Ալպանիացիներով, և միւսը Խսմայէլ ծիպրալդարին, զրեթէ հաւասարաթիւ զօրաց բանակով մը:

1822ին ամառուան միջոցն եղաւ որ երկը հարիւր յոյնէ աւելի, մեծաւ մասամբ կնկտիք, ծերեր և մանր տղայք, ապաւինած էին Մէլիտհոնիի պաղանձաւեայ քարայրը. Հետերնին բաւական կտրիճներ ալ կային որ աչք առած էին ամբողջ բանակի մը դէմ պաշտպանել քարայրին նեղ մուաքը ուր փորու վրայ սողալով կը մացուէր, և ամիսնե-

րով գիմանալու պաշար ալ կար : Տա-  
ճիկները ուղելով գործողութիւնը շուտ  
լմնցընել, օր մը որ քամին սաստիկ կը  
փչէր քարայրին բերնին դէմ, ժայռին  
ստորոտը զիգեցին ամէն տեսակ դիւ-  
րավառ նիւթ և կրակ տուին . կծու և  
թանձր ծուխ մը հովէն քշուած՝ մէկէն  
՚ի մէկ ներս վազեց : Խեղճ փախստա-  
կանները ամենէն հեռու ծակերը, ա-  
մենէն խոր գետնափորները դիմեցին .  
բայց մահարեր հեղձուցիկ ամպը ետե-  
նէն համնելով, մէկն ալ կենդանի չժո-  
ղուց : Յաղթականները տարակուսելով  
իրենց գիւտին յաջողելուն վրայ, տաս-  
նըութը օր քարայրին բերանը սպասե-  
ցին . վերջապէս տեսնալով որ այն գե-  
րեզմաննէն ձայնիկ մ՞ալ չէր ելլեր, գե-  
րի մը ներս մտուցին որ շատ չարշա-  
րուեցաւ զիրենք համոզելու համար թէ  
ողջ մարդ մըն ալ ներսը չէր մնացած  
ու ամեննին դարանէ վախնալիք չու-  
նին . դեռ երեք օր ալ կեցան, և անկէ  
ետքը միրտ ըրին ներս մտնալ և դի-  
ակները կողսպտել : 1830ի լոնտրայի  
մէջ եղած գետավանաժողովին Գ արձա-  
նադրութեան վճռովն որոշուեցաւ որ  
կրետէ բարձրագոյն դրան իշխանու-  
թեան տակ մնայ :

Գանտիոյ Միջերկրականին մէջ ունե-  
ցած դիրքովը կարծես թէ իրեն կ՚իյ-  
նայ նոյն ծովուն գերագահ տիրապե-  
տութիւնը և վաճառականութիւնը . և  
յիրափ շատ մօտ է թէ Ափրիկէի թէ  
Ասիոյ և թէ Եւրոպիոյ ալ . իր մէկ քա-  
նի նաւահանգիստները խիստ յարմար  
և ընդարձակ են, և զիւրին է հոնկէց  
աշխարհքիս ամէն կողմը վաճառք խաւ-  
րել : Բնակիչները գործունեայ և բազ-  
մաթիւ են, իրրե 470,000 որոնցմէ  
70,000ը մահմետական . երկին զանա-  
զան բերքերը ամէն տեսակ յատկու-  
թիւններն ունին զինքը հարստացընե-  
լու . հովուն բնութիւնը, բարեխառնու-  
թեան քաղցրութիւնը, պայծառ եր-  
կինքը՝ կենաց գիւրութեան հաւասար  
կը մատակարարեն նաև մոտաց յստա-  
կութիւն . և այս զուարձալի երկիրս  
կրնար այսօրուան օրս երջանիկներու

կղղի անուանուիլ եթէ լաւագոյն ճա-  
կատագրի մը հանդիպած ըլլար .  
Արշիպելագոսի կղզիներուն մեծ մա-  
սին պէս՝ Գանտիան ալ աւելի երկայն  
է քան թէ լայն . շրջապատը 100 փար-  
սախ է, մասամբ լայնութեան 34 աստի-  
ճանին տակ, և երկայնութեան 44 և 44  
աստիճաններուն մէջտեղը, բայց քիչ  
ճանչցուած և մասնաւոր ուշադրութե-  
արժանի բանը այն է որ նոյն ծովուն  
մէջ եղած միւս ամէն կղզիներուն եր-  
կայնութեան ուղղութիւնը հիւսիսէն  
դէպ ՚ի հարաւ է, աւելի կամ պակաս  
շեղելով գէպ ՚ի յարեւելս և յարևմուտս .  
Ընդհակառակն Գանտիայինն է յարեւ-  
լից յարեւմուտս . և այս մասնաւոր ուղ-  
ղութիւնը, մէկքանի բնագէտներու խօս-  
քին նայելով, Գանտիոյ միւս կղզինե-  
րէն տարբեր ծագում ունենալուն նը-  
շան է : Արևմտեան կողմանէ եկողին հա-  
մար առաջին երեցած երկիրն է սարա-  
ւանդակ մը որ խիստ երկնցած է ծո-  
վուն մէջ, և ասոր համար կը կոչուի  
Հրուանդան Սրւյ, որ հին ժամանակ  
Պսակոս կ՚անուանուէր . այս երկայն  
սարաւանդը կը ձեւացնէ Մելեքքս հը-  
րուանդանին հետ լայն ծովածոց մը, ո-  
րուն խորն է Գանէա քաղաքը և նաւա-  
հանգիստը, որ ըստ հասարակաց կար-  
ծեաց հին կրետէի ծաղկեալ և հոչա-  
կաւոր կիդոնիա քաղքին տեղը շինուած  
է, ուր կը տեսնուին դեռ ցայսօր հին  
շէնքերու մնացորդներ :

Հիմակուան քաղաքն ամեննին նշա-  
նաւոր բան չունի . տուներուն ձեր նոյն  
է ինչ որ բովանդակ Արևելից մէջ, այ-  
սինքն փոխանակ միտեալ և մէջ տեղը  
ցցուած տանիքներու, տափարակ տա-  
նեստաններ ունին առանց կղմինորի և  
առանց ապակւոյ . մեծ մասը մէկ սե-  
նեակով են : Փողոցները շիտակ են,  
տեղ տեղ լայն և աղբիւրներով զար-  
դարուած ուսկից կը բխեն յատակ ջրերւ  
Այնպիսի երկնքի մը տակ, զոր բը-  
ժըկութեան հայրն կը համարէր իբրև  
դարմանիչ մարդկային առողջութեան,  
անտարակոյս բնակիչները պէտք են  
զգալ իրեն բարերար ազդեցութիւնը .

և այս բանս Գանտիա ուգր կոխողին մէկէն 'ի մէկ աչքը կը զարնէ : Տաճիկները որոնց ցեղն արդէն գեղեցիկ է, աւելի բարձրահասակ են հոնտեղ, աւելի ջապինդ, քաջալանջ և թիկնաւէտ, վայելուչ տեսքով ու յաղթանդամ, և ասկէ զատ՝ քալուածքնին և կերպարանքնին վեհ և ծանր . այս բնական յատկութիւններէն դռւրս, որոնց չզարմանալն անկարելի է, անանկ զաժան գծագրութիւն մ'ունին որ տեսողաց սոսկալի կու գայ : Բայց բուն կղզեցւոց համար սոյն գովիեստը չենք կրնար կը ըկնել . հասակաւ ոչ այնչափ բարձր, կաղմութեամբ տկար քալուածքնին ոչ այնպէս սօս, նուազ ուժեղ բայց աւելի շնորհալից, կարծես թէ իրենց ծննդեան կլիմային տակ խորթացած և վայրենացած են : Նոյն զանազանութիւնը կը տեսնուի նաև երկու ազգերուն կանանց վրայ : Գանտիոյ տաճկուհիները Արևելից որ և է մասին մէջ եղածներէն աւելի գեղեցիկ են, իսկ յոյն կանայք իրենց արենակից հոմասեսներէն շատ նուազ են դեղով : Զարմանալի բան և արժանի քննուելու . ինչպէս կրնայ ըլլալ որ երկիր մը աւելի օտարականաց աղէկ և յարմար գայ քան եթէ իր բընիկ տեղացոց :

Բաց 'ի բորոտութենէն որ յԱսիոյ բերուած է և դիւրին զգուշութիւններով կրնայ անհետ ըլլուիլ, Գանտիոյ մէջ չկան տարափոխիկ կամ պլրշտրկուող հիւանդութիւններ : Այնպէս աղէկ է ջուրը ինչպէս օդը . լեռներուն բոլոր կողերէն առատ հոսանքներ կը վազեն, որոնք իրենց արագ սահելովը կը պահէն մաքրութիւննին և բնաւ չեն ժողուիր ճահիճ կամ լճացեալ ջրեր ձևացնելու համար, ուսկից կը բխեն մահառիթ ժահահոտութիւնք : Մթնոլորտին բնաւ նման է հողարոյսներունն ալ . իրենց առատութեանն հետ կրնային նաև տեսակի ազնուութիւն ունենալ եթէ երկրագործութիւնը, որ տէրութեանց սնուցիչ մայրն է, աւելի քաջալերութեան և խնամակալութեան հանդիպէր : Վաճառականու-

թիւնը և ճարտարութիւնը ծաղկելու համար ուրիշ բանի չեն սպասեր բայց եթէ յաջողագոյն ժամանակաց . իր դաշտորայքը գործունեայ և ազատ մըշակութեան մը յանձնուելով կրնան բուծանել ոչ միայն երկրցիները այլ և շրջակայից բնակիչքը, որոնց այնշաբնը պաստաւոր եղած չէ բնութիւնը : Հողուն և օգուն պատուականնութեամբը կարելի էր կրկին անգամ սերմաննել և հնձել, և անսառւններն ալ բազմացընելով, որոնցմէ այսօրուան օրս գրեթէ բոլորովին զուրկ է գանտիա, պտղաբերութեան և հարստութեան առատ աղբիւր մը կրնար բացուիլ :

Երկրին բերոցը առաջին կարգէն է ձէթը . չկայ կլիմայ մը, գետին մը որ գանտիոյինէն աւելի պատշաճ ըլլայ ձիթենեաց մշակութեանը, և եթէ կը զգուցոյս ձէթը մերկիններուն պէս մզուէր և մաքրուէր, հասարակ ձիթոյ աստիճանէն վեր կ'ելլար ու կ'աղատէր միայն օճառի և ձեռադործաց գալու դատապարտութենէն : Ցորենէն և բրինձէն զատ, որոնցմէ ազնիւը կրնար գտնուիլ, կը մշակեն նաև բամբակը, որ խիստ աղէկ առաջ կու գայ բայց պէտք եղած խնամքը չեն տանիր : Նոյն բանն ըսելուէ նաև թթենուոյն համար որ ցանցառ կը տեսնուի, սակայն կրնայ զարմանալի կերպով աճիլ և բանալ մետաքսի բանուկ վաճառականնութեան գուռ մը, որ հասարակաց հարստութեան աղբիւրներէն մէկն է : Կնճիթն կամ սօսամն որուն իւղը խիստ հին ժամանակներէ 'ի վեր շատ գործածական է յԱրևելս, ասդիս անդին կը տեսնուի դաշտերուն մէջ . այս օգտակար տնկոյս մըշակութիւնն ալ ուրիշներէն աւելի երեսէ ձգուած է :

Գանտիոյ գլխաւոր բերքերէն մէկն է դարձեալ իրեն զինին որ պահած է իւր նախնի համբաւը և ինչուան այսօր ըստքանչելի օշարակ մ'է տեղ տեղ : Գիտենք որ Հոմերոս կը զովէ երետէի գինին, և թէ Արամազդ նոյն կղզին բնակած ատենը ասկէ ուրիշ նեկտար չերխմեր : Իդալերան շրջակայքը շինուած

մալվագիան<sup>1</sup> շատ յարդի է . բայց Գանտիոյ բոլոր զինիները պէտք է շափով խմել , վասն զի ոչ միայն խիստ ազնիւ ու անուշահոտ են , այլ նաև ոգելից , ու կրնան զլուխ զարձնել և ջրդերը դրգուել :

Անուանի է Գանտիա իր սիրուն թուփերուն համար , զորոնք մշտածաղիկ գարուն մը կը պահէ անթառամելի , և որոնցմով զարդարեալ են միշտ բլրակները և դաշտերը 'ի զրօսանս տեսանելեաց . անուանի է նաև իր խնկենիներուն խիտ առ խիտ բազմութեանն համար , որոնցմով կը բուրեն ժայռերը , և իր անտառներովը՝ որ շատ տեղ կը ծածկեն լերանց զառիվայրները և կը պատկեն բլրոց գադաթունը : Ամենէն աւելի յարգ ունին իր շոճիները , մայրիները , եղինները որ կը կանզնեն իրենց բարձրաձագկ բուները օգուն մէջ , և անբաւ հարստութեան միջոց են նաւական շինութեանց գալով , ինչպէս նաև իրենց ծիւղերէն վազած ռետինովը : Գանէա քաղքին չորս կողմն եղած լեռներուն վրայ և Խոա լերան ստորոտը կ'աճի տեսակ մը թուփ , ուսկից կը վազէ լատան կամ՝ աղաևիգանոյն ըսուած խիժային հիւթը որ անուշահոտ խնկոց և քանի մը գեղերու բազագրութեանը մէջ կը մտնայ : Խիստ պատուական բան սեպուած էր այս լատանը հին Յունաց առջե , որ ուրիշ տեղուանք ալ կը գըտնուէր , և մասնաւորապէս 'ի Սիւրիա և 'ի Կիպրոս<sup>2</sup> : Լատանը քաղելու պաշտօնը այծերու յանձնած էին , եթէ կարելի է այսպէս ըսել . այս չորքոտանիները որ հարուած են ծառոց որոնց ծիւղերը և տերենները կը ճարակին , կ'իյնան թա-

փով լատանաբեր թուփերուն վրայ որոնց հոտը զիրենկք կը քաշէ , և կոտրրտած ծիւղերէն վազած ռետինը կը կպչի իրենց մօրուքին , կը թանձրանայ և պղտիկ գնտիկներ կը ձևացնէ զորոնք զդուշութեամբ կը հաւաքեն , բայց զրեթէ միշտ այծերու մազերուն հետ խառնուած ըլլալնուն այծահոտ կ'ըլլան : Հիմա աւելի խնամքով կը քաղեն լատանը տեսակ մը երկայնակոթ դաւազանով , որուն վրայի երկկարգեան փոկերը կ'անցընեն թուփերուն վրայէն ամենէն տաք օրերուն . այս ամենապարզ գործոյս փոկերուն կը կպչին բևեկնոյ նըման պայծառ և մաքուր կաթիլները , զորոնք կը քերեն և կը խրկեն 'ի վաճառ : Արեւելք ուրիշ բանի մ'ալ կը գործածեն այս լատանս , այսինքն մանր կտորուանք ըրած կը շփեն մատուրներնուն մէջ , որպէս զի ելած անոյշ հոտը վայելեն :

Եթէ այս կղզւոյս բոլոր բերքերը որ և իցէ երկրի մէջ եղածներէն լաւագոյն կը սեպուին , հանդերձ կղզեցիներուն մշակելու անհոգութեամբը , նոյնը կը ընանք զուրցել նաև իրեն բեռնակիր և հեծանելի անասուններուն նկատմամբ : Զիերը ծննդեամբ բարբարոսաց աշխարհէն են , սակայն ձեփ և գեղեցկութեան կողմանէ շատ անշքացած կը տեսնուին . գեղեցիկ ձի հազիւ կրնաս գտնալ , բայց թերևս ուրիշ տեղերու ծիանը չկրնար ասոնց հետ բաղդատուիլ ուժով և սրունից դիւրաթեքութեամբ ու ապահով քալուածքով : Սեպացեալ լեռները մազլցի ելլալու և կամ զառ 'ի վայր տեղերէ իշնալու վարժած՝ իրենց քայլափոխները հաստատուն են և վրանին ծանրացողը մարդը ըլլայ և կամ բեռն՝ ոչ երբէք կը սայթաքին ամենէն աւելի դժուարին ճամբաներու մէջ ալ , թէպէտ կարծես որ նեղութեամբ առաջ կ'երթան : Արդարե հիանալի բան է իրենց թեթեսութիւնը որով կ'ելլեն և կ'իշնեն այնպիսի տեղեր որ ուրիշ բան չեն եթէ ոչ միափերիթ մարմարիոնէ զրեթէ շիփշիտակ լեռնակներ , երկու կողմանէ զահավէժներով

1 Մալվական համանուն կղզեկի մը մայրաքաղաքն է Պելոպոնեսի մէջ , Մոռայի արևելեան կողմը . անուանի է իրեն անուշ գինին , որ Գանտիա ալ կը գտնուի :

2 Կիպրոսի լատանը և այծերուն քաղելը կը յիշէ մեր Մովսէս Խորենացին ալ իրեն աշխարհագրութեանը մէջ . « Այնի ՚ի նմա լատան ՚ի ցողոց անկեալ զիստով , կռուի ՚ի թափիչ վարոց և ՚ի մօրուս քօշից » :

անդնդացեալ, որոնց վրայ կարծես թէ ձիոց սմբակները չեն կրնար ոտից կը-ռուան գտնել: Ոտուրնին շատ անդամ մի և նոյն տեղը զրած ըլլալով, պղտիկ փորուած մ'ըրած են. և խորտաքորտ զառիվայրներէ իջնալու ատեն ուժով կը կոռուին գետնին և իրենց թաթուլ-ները ճիշդ փորուածներուն մէջ կը դը-նեն, զարմանալի ուշագրութեամբ մը փնտուելէ և գտնալէ ետքը. որչափ որ ալ զարհուրելի երևնայ ճամբան, պէտք չէ բնաւ շփոթիլ. բաւական է միայն թողուլ ճին որ ուզածին պէս երթայ, առանց մտածելու թէ սանձը ձեռքն է:

Շներուն ցեղն օտարացած է գան-տիոյ մէջ. մարդուս հաւատարիմ ըն-կերը հոնտեղ մեծ քերծէի<sup>1</sup>, մը տե-սակ է, ինչպէս գրեթէ առհասարակ յԱրևելս. բայց կրնայ ըսուիլ որ ձիե-րուն պէս անխնամ մեծնալով, կորու-սած են իրենց որարդութեան բնազ-դումը, և անով աւելի կը սիրեն տէրեր-նուն քով զատարկ նատիլ քան թէ բնութեան աշխուժութեանը տալ ի-րենք զիրենք: Գանտիա չգտնուիր ա-մենսին մարդակեր կամ վայրենի զա-զան մը. հովիւն ապահով է իր հօտե-րուն վրայ և չիվախեր գայլին ժանիքնե-րէն. անոր համար ոչխարները օրն՝ ի-րուն բացօթեայ կ'անցընեն և արձակ համարձակ կը ճարակին անուշահոտ-բոյսերը որոնցմով լի են լեռները: Ա.յ.-ծերուն և մաքիներուն տուած պա-տուական կաթը, ամենահամ պանիր մը շինելու կը գործածուի, և մասնա-ւորապէս Սփաքիա շինուածն (որ կը զ-գւոյն հարաւային կողմը կ'իյնայ) փա-փաքելի է բովանդակ Արևելից մէջ: Կրետացիք խողերու շատ երամակներ ալ կը պահեն, որոնք պիղծ կենդանի սեպուելով ջաճկաց, բնակիչները կը ր-նան բաց օղուն տակ բաել զիրենք ա-ռանց վախ ունենալու որ յափշտա-կուին:

Մշակական ճարտարութեան ճիւղ մը որ Գանտիա զիւրութեամբ և յաջո-

դութեամբ կը զարգանայ, մեղուաց ա-ճելութիւնն է. իրենց մեղրին աղնուու-թիւնն յայտնելու համար հիները ը-սած էին որ Արամազդ անով սնած էր իդա լերան վրայ, որ հիմա Բախորիդի կ'անուանի, և զոր Գուռնը փոր կոչեց յերկ իշու մը խոշոր և տգնդ կռնակ, հոնտեղ նոր տեսակ բոյս մը չգտնալու բարկութենէն: Իրօք տեղւոյս մեղրը շատ համեղ է. և մոմն ալ որ հիմա պղտիկ վաճառականութեան մը նիւթ է կղզւոյն համար, կրնար մեծապէս շահաւէտ ըլլալ եթէ գործունէութիւ-նը և ճարտարութիւնը աւելի մեծ ըլ-լային:

Թէպէտև գանէա է կղզւոյն աւելի բազմամարդ և շահավաճառ քաղաքը, բայց մայրաքաղաքը Գանտիան է, որ կ'ըսուի նաև Մէկուլո-Քաւադրօն, այս-ինքն Մէծ-Բէրդ: Այս բիւզանդեան, արաբական, վենետիկեցի և հիմա տա-ճիկ մայրաքաղաքս միայն անունը պա-հած է և առաւելութիւնքը կորուսած. իր նաւահանգիստը որ շատ բանուկ էր վենետիկեցւոց ձեռքն եղած ատենը, հիմա աւազակոյտներով գոցուած է և միայն նաւակներու կրնայ մերձենալի ըլլալ: Գանտիա քաղաքը նախնի Հե-րակլէա քաղքին տեղն հիմնուած է, գեղեցիկ դաշտի մը մէջ, բլուրներով և բարձրաւանդակներով շրջապատեալ. փողոցները մէկ գծի վրայ են, հրապա-րակները վայելուչ, տները ամրաշէն: Գանտիոյ քովերը փոշոյն մէջ թա-ղուած են հին կնոսոս քաղքին փլա-տակները, ուր էր Մինովսի արքունիքը:

Կրետէի վանքերը շատ են, և ատե-նօք ալ աւելի շատ էին. ասոնցմէ ա-մենէն ծաղկեալն և հոչակաւորը ին-չուան այս վերջին օրերա Արկադիի մե-նաստանն էր. որուն անունը կ'երեայ թէ նախնի Արկադիա քաղքէն է: Իդա լերան սառուտը ապառաժուտ զաշտի մը մէջ շինուած էր և կը տեսնուէր պարտէզներու, այդիներու, հերձինե-րու, նոճերու և պիստակենեաց մէ-ջէն. շինուած էր ըսի, որովհետեւ հիմա միայն աւերակները կան, որոնց տակը

Թագին հարիւրաւոր Յոյներ և Ցածիկ-ներ երբ որ տեղոյն վանահայրը ականով օդ հանեց այն հնութեամբը պահծալի մենաստանը։ 1700ին Դուռնը-ֆոր պարտած է սոյն վանքս և կ'ըսէ որ ընդարձակ և գեղեցիկ շէնք մ'էր գոթացի պատկերներով զարդարուած ե-կեղեցեաւ մը, որուն մէջ կային հարիւր կրօնաւորք, խոկ ուրիշ երկու հարիւր արքեղաներ ալ մերձակայ կալուածներուն մէջ բաժնուած էին. ըստ իրեն՝ մենաստանին ամենէն աղուոր տեղը զինետունն էր, որուն մէջ գտաւ ոչ ինչ պակաս քան զ200 տակառ զինւոյ, և ամենէն ազնիւը վանահօր անուամբը կը կոչուէր։ Այս զինին տակառը լեցնելու ատեն վանահայրը հետագայ աղօթքը կ'ըսէ, զոր Դուռնըֆոր թարգմանած է յոյն մաշտոցէն։ « Տէր Աստուած մարդասէր, նայէ աս զինւոյս և իրեն խմողացը վրայ. օրհնէ մեր կարաներն ինչպէս օրհնեցիր թակորաց ջրհորները, Սելովամայ աւազանն և քուսուրը Ասաքելոցդ ըմպելիքը։ Տէր, որ հաճեցար կանայի հարսանեաց մէջ բազմականներէն մէկն ըլլալ, և ջուրը զինի դարձնելով յայտնեցիր քուկին փառքդ աշակերտներուդ, խրկէ քուկին սուրբ Հոգիդ՝ի զինիս յայս, և օրհնէ յանուն քո. ամէն »։

Շատ մը աւերակներ որ երկրին երեսը ցան և ցիր սփուռւած են, հին մեծագործութեան մը նշխարք ըլլալնին կը ցուցնեն, և են Դորտինա երեսելի քազաքինը, որուն զօրութիւնը և պայծառութիւնը մթագնեցին կնոսոսի փառքը։ Հոն կը տեսնուի նաև բաւիղը. բայց կ'երեսայ թէ հին ժամանակներն անուանի եղած բաւիղը չէ, որուն Արիանէի և թեսեայ պատմութիւնը ուրիշ համբաւ ալ կու տայ. այս բաւիղը կնոսոսի մօտ էր և հիմա ամենեին հետքը չնշմարուիր։ Գորտինայի լաբիւրին. թուր կեցած է և ինչուան հիմա կը տեսնուին նոյն տեղը հոս լայն և ութունեան բարձր ճամբաներ, հոն նեղ և ցած շաւիղներ, որ կը ցցուին ասդիս անդին և կը ձեւացնեն քարայրներ, սե-

նեակներ, սանդուղներ, առ ՚ի կախ ժայռեր, դաշտեր։ Սուտայի նաւահան դրստէն զատ՝ կղզւոյն արևելեան կողմը կայ ուրիշ նաւահանզիստ մը նոյն պէս ընդարձակ, հանգիստ և ապահով, Սիսէրա և Սովոմնն հրուանդաններէն ձեւացած ծոցին մէջ։

Ճամբորդներէն շատերը նկարագրած են իրենց պատմութեանց մէջ գանտիոյ շրջակայից պարտէզներն ու մեծաւ զարմանալեզր կը խօսին, ինչպէս արդէն արժանի են. իրաւ է որ մեր պարտէզներուն պէս չափակցութիւն, կարդ, բաժանմունք չունին, և ոչ տերևապատորմունք, ոչ շիտակ ծառուղիներ, այլ ճիշդ խօսելով բանջարոցներ են, անտառակներ, սաղարթախիտ հովանոցներ, որոնց բնաւ դպած չէ մկրատը և կը պատեն պտղատու ծառոց բոլորտիքը. տեղ մը բանջարներ, ուրիշ տեղ մը ծաղիկներ գրեթէ ըստ բախտի ցանուած, կ'աճին ծառերու և թփերու մէջէն. ուղղութեան չուանը անօգուտ գործի մ'է գանտիացի պարտիզանին համար, ինչպէս նաև յօտոցը. ծամածուռ նեղ անցքեր կը սողան այս անտառակներուն մէջ։ Բայց այս առերևոյթ խառնակութիւնը, որ ստոյգ բնութեան չափակցութիւնն է, ունի իրեն գեղեցկութիւնն ալ. արուեստներէն կը ծնանի չքեղութիւնը, բայց միայն զգայարանքները կը սոնքանան անկից. ոչ ոք մեր բուրաստաններուն չափչրիած ու կարկնէ ելած ճեմելեացը մէջ պարտելով, — ուր ծառերը արուեստաբար հիւսուած ու հարթուած են, ջուրերը մեծ նեղութեամբ կը ցաթքեն շատրուաններէ, կամ բանտեալ են ջըրանցքի մը ափանց մէջ՝ որուն երկու ծայրերն ալ կը տեսնուին, և կամ ահագին շառաչմամբ կ'իյնան աստիճանաց վրայ, խեղճ նմանութիւն վսեմ քարավազներու ուսկից գետերը կը թաւալին փրփրալից ալիքներով, — ոչ ոք կ'ըսեմ չիմանար այն գողտը զգացմունքները որ սիրելի են հոգւոյն և մաքուր ու քաղցր վայելքներ կ'ընծայեն իրեն։ Այս հոչակաւոր կղզւոյս մէջ բնու-

թեան մեծագործութիւնն աղէկ հաս-  
կընալու համար, պէտք է Գանէայի ա-  
զուոր դաշտերէն մէկն երթալ, ուր ա-  
մէն կողմ՝ կը տեսնուի արգաւանդ և  
պարարտահող գետին մը : Հեռուէն  
անտառի պէս երեցած ծառերը ձիթե-  
նիներ են, որոնք այնպիսի կլիմայի տակ՝  
ուր անծանօթ է մեր ձմեռներուն զառ-  
նահոտ չունչը, միայն ծերուէն կը մեռ-  
նին : Կան նաև ուրիշ տեսակ հասակա-  
ւոր տունկեր որ իրենց թաւ ոստերովը  
մեծ տարածութիւնը կը ծածկեն և անցք  
չեն տար արևուն ճառագայթիցը : Մար-  
դուս սիրտը վախ մը կ'ինայ այն մժին  
անտառներն ուր կոխելու ատեն, թէ-  
պէտե ծառոց ճիւղերը կորառած են  
գեղեցիկ ծաղկըներու և համեղ պը-  
տուղներու տակ, ինչպէս են քաղցր և  
թթուաշնարինջ, կիտրոն և լեմոն, նուշ,  
յունապ, ծիրանեփայլնոռունք, արմաւ,  
և իրենց ուր խոնարհ մանիշակը որ  
անոյշ հոար չորս դին կը ծաւալէ :

Դաշտերուն մէջի գեաերը որոնց ա-  
փունքը բուսած են մրտենիք ու ծուա-  
զենիք<sup>1</sup>, այլ և այլ առուակներ կը  
ճղճղին : Պտղատու ծառոց փունջեր օգ-  
տակար բոյսերու վրայ կը բարձրանան,  
օրինակ իմն խնձորի, տանձի, բալենի,  
ընկուղի, թզենի, եռ, թէպէտե կէս վայ-  
րենի վիճակի մէջ են մշակութեան ա-  
րուեստը ետ ըլլալուն պատճառաւ . ծա-  
ռոց պատուաստը անծանօթ է հոնտեղ.  
տեսակ մը ծիրան որ Եւրոպա չգտնուիր  
և սովորական է յԱսորիս և յԵղիպտոս,  
Գանտիա ալ կայ . արաբացիք միշմիշ  
կամ մէշմէշ<sup>2</sup> կ'անուանեն զայն (ρυντος  
armeniacα τισյμισι), և չորցընելով կե-  
րակուրներու մէջ կը խառնեն, բայց  
միայն հարուստներուն տունը :

Թուչոց անհամար տարմեր որոնց ոչ  
ոք կը համարձակի չարիք մ'ընել, կը  
թուչտին ազատութեամբ այն անտառ-  
ներուն մէջ ուր կը դնեն բոյներնին :

1 Գ. Laurier cerise կամ Laurier de Trébi-  
zonde. իս . Lautoceraso. ՏՃ. Գարւ Էւդր աշճ :

2 Ըստ մեր բժշկաբանաց՝ հայերէն խոնին կը  
կոչուի այս տեսակ ծիրանը որուն կուտը լիզ է .  
ՏՃ. Զէրտուի :

Մտիկ ըրէ, կ'աղաչեմ, վայրկեան մը .  
չես լսեր լեռներուն վայրի և անապատ  
կատարներուն վրայ որ կը պատեն կե-  
ցած դաշտ, սա ողբանուագ և քաղցր  
եղանակները որ կը հնչեն ժայռերուն  
մէջ . ասոնք դոյզնազիւտ թռչնոյ մը ,  
մենակեաց սարեկին դայլայլիկներն են .  
ինչպէս իր պայծառ բայց մեղմ ու տը-  
խուր երգերը ախորժելի կու գան ա-  
կանջի և կը թափանցեն հոգւոյն խորե-  
րը : Յոյները այս թռչունս կ'անուանեն  
Բէդրօքորիժօ, ժայռերու թռչուն .  
իսկ Տաճիկները գայս պիշտիւլիւ ,  
ժայռերու սոխակ . մեծ էֆէնտիները  
երբեմն ինչուան հարիւր մառչիլ (դու-  
րուշ) կու տան այս թռչունս գնելու հա-  
մար :

Չէ թէ միայն օդուն մէջ կախուած  
կը տեսնուին այն անթիւ ծաղիկները ,  
այլ և բոլոր գետինը կորսուած է ա-  
նոնց տակ, և շատ աղուոր են ի-  
րենց գոյնզգոյն նարօտիւքը և բազմա-  
պատիկ զանազանութեամբ : Մասնա-  
ւորապէս կրետէին գաղթուած են մեր  
պարտէզներուն աննման զարդ ձզող  
հրանունկի գեղեցիկ տեսակներն ու  
փեննաները . ամբողջ դաշտեր նարգե-  
սով բանուած են . վարդ, շուշան, յա-  
կինթ, քրքում, ամէն մէկ քայլիդ առ-  
ջնդ կ'ելլան : Այս առատ բուսաբերու-  
թիւնընշանաւոր է դարձեալ իրեն խըն-  
կենիներուն համար, որոնք այնչափ  
բազմութեամբ և զանազանութեամբ  
աշխարհիս վրայ խիստ քիչ տեղ կը  
գտնուին . թիւմ, ծովրին, զուիրակ ,  
թուրինջ խոտ (Գ. Mélisse), անա-  
նուխ, զոպայ, հասարակ են այն դաշտո-  
րայից մէջ և լերանց վրայ : Կրետէի  
խանթեփարը<sup>1</sup> որ հնուց 'ի վեր անուա-  
նի եղած է . կը ծածկէ ժայռերը . իր  
բալասանիկ հոտը երկայն ժամանակ  
կը պահուի , և արժանահաւատ անձ  
մը կը վկայէ որ այն կղզւոյն մէջ քա-  
ղելէն քսան տարի ետքը նշանախեցի

1 Գ. Dictame, անուշահոռ բոյս մըն է զոր  
ժամանակաւ վէրքերը առողջացնելու համար կը  
դործածէին . Տաճիկները կ'անուանեն Կէէրէէ  
Խոր . իրին օթու :

մը չափ ալ չեր կորուսած իր հոտը և  
բժշկական զօրութիւնը :

Մաղթենք որ պատերազմին ահա-  
ւոր հարուածը շուտով վերանայ այս  
կղզւոյս վրայէն, որ չկրնար մոռցած ըլ-  
լալ դարուս առաջին կիսոյն մէջ կրած  
նեղութիւնները, և գոնէ երկրորդ կի-  
սոյն տարեգրութեանց էջերը բոլոր ա-  
րեամբ չդրոշմէ :

### Կրօնական վիճակագիր Ուրասատանի .

Ուրսիոյ մէջ բազմաթիւ կրօնքներ  
կան, որոնք շատ աղանդներ կը բաժ-  
նուին : Լեհաստանի թագաւորութիւ-  
նը դուրս հանելով, Ուրսիոյ ինքնակա-  
լութեան մէջ, 50,000,000 յունադա-  
ւան կը գտնուի : Ասոնցմէ վերջը բազմա-  
թիւ են Մահմետականքիրք 5,500,000  
հարաւային գաւառաց մէջ : Կաթո-  
լիկը 2,800,000 են և իրենց թիւը կը  
հաշուի հարիւրին վաթսուն՝ Վի-  
նայի կառավարութեան մէջ, հարիւ-  
րին ութսունը մէկ Քովսոյի կառա-  
վարութեան մէջ, և շատ բազմաթիւ  
են Սպիտակ Ուրսաստանի մէջ : — Եր-  
կու միլիոնի չափ նորաղանդ կայ, մե-  
ծաւ մասամբ Պալդիկ ծովուն կողմերը .  
(100ին 96 Եաթոնիոյ մէջ. 100ին 89  
Լիվոնիոյ մէջ, հարիւրին 84 Քուրլան-  
տիոյ մէջ, հարիւրին 12 ալ Բեղրապուր-  
կի կառավարութեան մէջ,) 'ի բաց  
առնելով զանոնք որ կը գտնուին գեր-  
մանացի զաղթականաց մէջ, և կը բնա-  
կին Սարազովի, Սամարայի և Տաւրիոյ  
կառավարութեանց մէջ :

Հրէայք որ 1,450,000 են, երբեմն զրե-  
թէ ամենքն ալ արևմտեան գաւառները  
կը բնակէին. բայց մտերս կայսերական  
հրամանի թոյլտուութեամբը, ուր որ  
իրենց յարմար սեպեցին հոն հաստա-  
տուեցան : — Ասոնցմէ ետքը կան նաև  
500,000 կռապաշտ, որոնք ասդիս ան-  
գին ցրուած են Սիպերիոյ լայնատարած  
գաշտերուն մէջ : — Հայք որոնց թիւը

500,000ի կ'ելլէ, կը բնակին գրեթէ  
ամենքն ալ 'ի կաւկաս և Եքաղերինու-  
լաւի կառավարութեան մէջ : Ուրիշ  
շատ աղանդներուն մէջ, որոնք մեզի ան-  
ծանօթ են, գիտողութեան արժանի են,  
Խլիսդ ըսուածներն, որոնց թիւը 100  
հազարի մօտ է և կը բնակին Օրելի,  
Քուրաքի և Սիպերիոյ այլ և այլ կառա-  
վարութեանց մէջ . ասոնք ոչ եկեղեցա-  
կան խորհուրդ և ոչ կղեր ունին, և ան-  
ձնուրացութիւնը բաւական կը սեպեն  
քրիստոնեայ ըսուելու համար : Տուխո-  
պուրծք ըսուածները կը գտնուին Սա-  
րազովի, Տաւրիոյ և Երեւանու կառա-  
վարութեանց մէջ . և Այրարատայ գա-  
գաթան վրայ կը փնտռեն իրենց նոր  
Աւետեաց երկիրը :

Պէղբորովչինի ըսուածները, որոնք  
ինչպէս իրենց անունէն կ'երեայ քա-  
հանայից իշխանութիւնը չեն ընդու-  
նիր, և միայն առժամանակեայ կ'ընդ-  
ունին հովիւներ, կը բնակին Արխան-  
կելի, Օլոնեցի, Նովկորոսի և Բաքովի  
գաւառաց մէջ :

Ասոնցմէ զատ վոլկայի և Օքայի ե-  
զերքներն ալ կը գտնուին մէկ միլիոնի  
չափ մարդիկ, որոնք որ և իցէ քաղա-  
քական իշխանութիւն օրէնքէ դուրս  
կը համարին, կայսրը նեռն կը սեպեն,  
և թափառական կեանքը իրրե հաւա-  
տոց ամենէն հարկաւոր մասերէն մէկը :

Առիւծ կուցանկայր եղջերուի սիրտ  
ուտել, առաքեաց և կոչեաց զեղջերուն .  
բացին զիրան . ասաց աղուխոյն՝ թէ  
բեր առ իս զիրան . ետես (աղուէսն) և  
ցանկացաւ և եկեր : Եւ ասէ առիւծն .  
ընդէր ոչ փութով բերես, և նա ասէ .  
թէ ունեցել էր սիրտ՝ ոչ էր եկել . բայց  
զի վախուկ էր՝ վասն այն երեկ :